

**ՖԻՆԱՆՍԱՄԱՐԴ-ՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ինչպես ցանկացած այլ գործունեության, ֆինանսաարդյունաբերական խմբերի (ՖԱԽ) ձևավորման ու գործունեության համար կարևոր նշանակություն ունի համապատասխան օրենսդրական հիմքերի ձևավորումը: Թեև միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՖԱԽ-երի գործունեության համար առանձին օրենսդրության առկայությունը պարտադիր չէ, և այդ կազմավորումները կարող են գործել նաև առանց հատուկ օրենսդրության, այդուհանդերձ, զարգացող այնպիսի երկրներում, ինչպիսին է նաև Հայաստանը, նման իրավական հիմքերի առկայությունը ոչ միայն ցանկալի, այլև խիստ անհրաժեշտ է: Խնդիրն այն է նրանում, որ զարգացող երկրներում, բացի ստվերային տնտեսության մեծ ծավալների առկայությունից, մրցակցային հարաբերությունների անկատարությունից և հանրահայտ մյուս երևույթներից, դեռևս ձևավորված չեն նաև գործարարության կայուն ավանդույթներ և էթիկայի կանոններ, ինչն էլ, բնականաբար, հնարավորություն չի տալիս լրացնելու այն «բացերը», որոնք առաջանում են այս կամ այն ոլորտում օրենսդրական հիմքերի բացակայության պարագայում:

Այս տեսանկյունից, կարծում ենք, ՀՀ-ում շատ արդիական և հրատապ խնդիր է ՖԱԽ-երի ձևավորման և գործունեության օրենսդրական հիմքերի ստեղծումը, որը պետք է հիմնվի առաջին հերթին ՀՀ քաղաքացիական օրենսդրության վրա: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջինս բավականաչափ ազատական բնույթ ունի և որևէ խոչընդոտ չի պարունակում ՖԱԽ-երի մասին օրենք մշակելու և ընդունելու համար (այս առումով վատագույն դեպքում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում ընդամենը որոշ լրացումների անհրաժեշտություն կարող է առաջանալ): Ուստի, կարգավորման հիմքում ունենալով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքը, կարծում ենք, անհրաժեշտ և նպատակահարմար է ձևավորել հատուկ օրենսդրություն՝ ՖԱԽ-երի ձևավորման, գործունեության և դրանց նկատմամբ պետական վերահսկողության հետ կապված հարաբերությունների հստակ կանոնակարգման նպատակով:

Այս կապակցությամբ, հաշվի առնելով նաև արտասահմանյան փորձը, անհրաժեշտ է մշակել ու ընդունել «Ֆինանսաարդյունաբերական խմբերի մասին» ՀՀ օրենք, որի նախագծի մշակման նպատակով էլ առաջարկում ենք որդեգրել հայեցակարգային հետևյալ մոտեցումները:

Որպես այս օրենքի հիմնական նպատակ՝ անհրաժեշտ է սահմանել ՖԱԽ-երի ստեղծման, գործունեության, վերահսկողության և դրանց լուծարման իրավական հիմքերի ձևավորումը: Սակայն, սա չի նշանակում, որ տվյալ օրենքը պետք է լինի ՖԱԽ-երի հետ կապված հարաբերությունները կանոնակարգող միակ օրենսդրական փաստաթուղթը: Այս շրջանակում պետք է ընդգրկվեն նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածները, իրավաբանական անձանց պետական գրանցման մասին ՀՀ օրենսդրությունը, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, ՖԱԽ-երի ստեղծման մասին տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված պայմանագրերը (համաձայնությունները), ինչպես նաև միջազգային կամ միջպետական ՖԱԽ-երին առնչվող միջազգային ու միջպետական պայմանագրերը: Այսինքն, հարցն այն է, որ հնարավոր չէ մեկ օրենքի ընդունմամբ լուծել ՖԱԽ-երի հետ կապված տարաբնույթ հարաբերությունների կարգավորման խնդիրները,

ինչն էլ նշանակում է, որ մշակման ենթակա օրենքը պետք է հաշվի առնի արդեն իսկ գոյություն ունեցող օրենսդրական նորմերը, որոնք ուղղակի կամ անուղղակի ձևով վերաբերում են ՖԱԽ-երին:

Այս առումով, կարծում ենք, բացի այն, որ առանձին հարցեր պետք է կարգավորվեն ՀՀ կառավարության կողմից (օրենքի կիրարկումն ապահովող առանձին կարգերի ընդունումը, տարբեր նորմատիվների սահմանումը և այլն), անհրաժեշտ է նախատեսել նաև, որ եթե ՖԱԽ-ի ստեղծումը պայմանավորված է նաև որևէ սոցիալական կամ պետական քաղաքականության այլ ուղղություններով որոշակի ծրագրերի իրականացմամբ, ապա ՖԱԽ-ի ստեղծման, գործունեության և վերահսկողության հետ կապված առանձին հարցեր նույնպես կարող են կարգավորվել ՀՀ կառավարության որոշումներով: Վերջինս անհրաժեշտ է կարգավորման տվյալ դաշտն առավել ճկուն դարձնելու և այս ոլորտում հանրապետության գործադիր իշխանության անմիջական մասնակցությունն ապահովելու համար, ինչն էլ, իր հերթին, կհանգեցնի ոչ միայն պետական, այլև ՖԱԽ-երի կառավարման արդյունավետության մակարդակի բարձրացմանը և «պետություն-մասնավոր հատված» կապերի ռացիոնալացմանը:

Օրենքի հստակության առումով շատ կարևոր է ճիշտ սահմանել «ֆինանսաարդյունաբերական խումբ» հասկացությունը, որը, բնականաբար, պետք է կատարվի այդ հասկացության ինչպես տնտեսագիտական, այնպես էլ իրավական իմաստի շեշտադրմամբ: Կարծում ենք, որպես այդպիսին կարելի է ֆինանսաարդյունաբերական խումբը սահմանել. «ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին պայմանագրի հիման վրա իրավաբանական անձանց միավորում, որը գործում է որպես հիմնական և դուստր ընկերությունների համակարգի և (կամ) ամբողջությամբ կամ մասամբ իրենց նյութական և ոչ նյութական ակտիվների միավորման (մասնակցության համակարգի) միջոցով՝ ներդրումային և այլ ծրագրերի (նախագծերի) իրականացման, մասնակիցների տեխնոլոգիական և տնտեսական ինտեգրացիայի նպատակով, որոնք ուղղված են մասնակիցների մրցունակության մակարդակի բարձրացմանը, ապրանքների և ծառայությունների շուկաների ընդլայնմանը, արտադրության արդյունավետության մակարդակի բարձրացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը»:

Ինչ վերաբերում է ֆինանսաարդյունաբերական խմբի մասնակիցների կազմին, ապա նրանք իրավաբանական այն անձինք են, որոնք ստորագրել են ՖԱԽ-ի ստեղծման մասին պայմանագիրը, ինչպես նաև այդ պայմանագրով հիմնադրված՝ ՖԱԽ-ի կենտրոնական (հիմնական կամ մայր) ընկերությունը, կամ էլ ֆինանսաարդյունաբերական խումբ ձևավորած հիմնական և դուստր ընկերությունները: Մյուս կողմից՝ ՖԱԽ-ի կազմում կարող են ընդգրկվել հայրենական ու օտարերկրյա ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային կազմակերպություններ (բացառությամբ հասարակական և կրոնական կազմակերպությունների), սակայն նշվածը դեռևս բավարար չի կարելի համարել, քանի որ այս իրավաբանական անձինք շատ տարբեր են: Ուստի, անհրաժեշտ է սահմանել նաև այնպիսի պայմաններ, որոնք կերաշխավորեն ՖԱԽ-երի կողմից այս օրենքով նախատեսված նպատակների իրականացումը: Այս առումով, ստեղծվող ՖԱԽ-երը, մեր կարծիքով, պետք է բավարարեն հետևյալ հիմնական պայմանները՝

- ՖԱԽ-ի կազմում պարտադիր պետք է ընդգրկված լինեն ապրանքային և ֆինանսավարկային ծառայությունների շուկաներում գործող առնվազն մեկական կազմակերպություն,
- ցանկացած ընկերություն կամ ֆինանսավարկային կազմակերպություն կարող է հանդիսանալ միայն մեկ ՖԱԽ-ի մասնակից,

- եթե հիմնական ընկերությունը չունի ֆինանսավարկային կամ բանկային դուստր ընկերություն կամ կազմակերպություն, ապա հիմնական և դուստր ընկերությունների համակարգը կարող է ՖԱԽ կազմել այդպիսի որևէ կազմակերպության հետ կնքված պայմանագրի հիման վրա,
- ՖԱԽ-երի մասնակից կամ հիմնադիր կարող են հանդիսանալ նաև պետական (պետական բաժնեմաս ունեցող) և համայնքային ձեռնարկություններն ու կազմակերպությունները, որոնց մասնակցության ձևերն ու ծավալները պետք է որոշվեն դրանց հիմնադիրների կողմից,
- դուստր ընկերությունները ՖԱԽ-ի ստեղծման մասնակից կամ գործող ՖԱԽ-ի կազմում կարող են ընդգրկվել միայն իրենց հիմնական (մայր) ընկերության հետ միասին,
- ՖԱԽ-ի մասնակից կարող են դառնալ ֆինանսավարկային կամ ներդրումային կազմակերպություններ, որոնք որոշակի դեր ունեն այդ ՖԱԽ-ի ներդրումային գործընթացի ապահովման մեջ:

Օրենքում անհրաժեշտ է հստակ տարբերակել նաև ՖԱԽ-երն ըստ կապիտալի ծագման երկրի: Մասնավորապես, եթե ՖԱԽ-ի կազմում ընդգրկված է որևէ այլ երկրի տարածքում ստեղծված իրավաբանական անձ, ապա այդպիսի խումբը կկոչվի վերազգային ֆինանսաարդյունաբերական խումբ, իսկ եթե ՖԱԽ-ը ձևավորվում է միջկառավարական համաձայնագրերի հիման վրա, ապա տվյալ խումբը կարելի է անվանել միջպետական ֆինանսարդյունաբերական խումբ, որի ստեղծման, գործունեության ու լուծարման առանձնահատկությունները (այդ թվում՝ նաև տրամադրվող արտոնությունների շրջանակը) պետք է սահմանվեն համապատասխան միջպետական համաձայնագրերով (պայմանագրերով):

Օրենքի կարգավորման հաջորդ խնդիրը ՖԱԽ-ի պետական գրանցումն է և համապատասխան կարգավիճակի շնորհումը, ինչը կկատարվի իրավաբանական անձանց պետական գրանցման մասին օրենսդրությանը համապատասխան: Սակայն, այս տեսանկյունից կարևոր հանգամանք է պետական գրանցման նպատակով ՖԱԽ-ի կենտրոնական (գլխամասային) ընկերության կողմից ներկայացվող փաստաթղթերի շրջանակի սահմանումը: Որպես այդպիսիք կարող են սահմանվել ՖԱԽ-ի ստեղծման մասին պայմանագիրը (բացառությամբ այն ՖԱԽ-երի, որոնք ստեղծվում են հիմնական ու դուստր ընկերությունների մասնակցությամբ), մասնակից ընկերությունների և կազմակերպությունների պետական գրանցման և հիմնադիր փաստաթղթերի, ինչպես նաև բաժնետիրական ընկերություն հանդիսացող յուրաքանչյուր մասնակցի (ներառյալ կենտրոնական ընկերությունը) բաժնետերերի գրանցամատյանների նոտարական կարգով վավերացված պատճենները, ՖԱԽ-ի կազմակերպական նախագիծը, վերազգային (միջպետական) ՖԱԽ-երի դեպքում՝ նաև նոտարական կարգով վավերացված օտարերկրյա մասնակիցների հիմնադիր փաստաթղթերի պատճենները, ՖԱԽ-ի ստեղծման նպատակով հակամենաշնորհային մարմնի կողմից տրված դրական եզրակացությունը: Սա, իհարկե, սպառնիչ ցանկ չէ, և ՀՀ կառավարությանն անհրաժեշտ է իրավունք վերապահել սահմանելու նաև այլ պահանջներ, որոնք պետք է ապահովեն հնարավոր չարաշահումների կանխարգելումը:

ՖԱԽ-ի պետական գրանցման մասին որոշումը պետք է ընդունվի կազմակերպությունների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնի կողմից՝ ներկայացված փաստաթղթերի փորձաքննության արդյունքների հիման վրա, որոշակի ժամկետի (օրինակ՝ մեկ կամ երկու ամսվա) ընթացքում: Ընդ որում, ավելորդ քաշքշուկներից և կոռուպցիոն ռիսկերից խուսափելու նպատակով անհրաժեշտ է հստակ սահմանել այն որոշումները, որոնք

կարող է ընդունել լիազորված մարմինը, մասնավորապես՝ ՖԱԽ-ի գրանցումը մերժելու մասին, ՖԱԽ-ը գրանցելու մասին և ՖԱԽ-ի ստեղծման նպատակով ներկայացված փաստաթղթերը վերադարձնելու և որոշակի ժամկետում դրանք սահմանված պահանջներին համապատասխանեցնելու մասին (եթե դրանք թերի են կամ պարունակում են էական սխալներ): ՖԱԽ-ի պետական գրանցումը մերժելու և փաստաթղթերը լրամշակման համար վերադարձնելու մասին որոշումները պետք է լինեն հիմնավորված և հստակ պատճառաբանված՝ նշելով նաև այն իրավական ակտերի կոնկրետ հոդվածներն ու նորմերը, որոնք հիմք են հանդիսացել համապատասխան որոշումն ընդունելու համար, իսկ այս շրջանակից դուրս պետական գրանցում իրականացնող մարմինների կատարած գործողություններն ու անգործությունը կարող են բողոքարկվել դատական կարգով:

ՖԱԽ-երի պետական գրանցումը, մեր կարծիքով, պետք է կատարվի առանձին գրանցամատյանի վարման ձևով, ինչը թույլ կտա ոչ միայն հեշտացնել այս բարդ կազմավորումների հետ աշխատանքը, այլև հիմք կհանդիսանա ՖԱԽ-երի գործունեության վերաբերյալ ամփոփ վիճակագրական տվյալների հավաքագրման և հաշվետվությունների ուսումնասիրության ենթահամակարգ ձևավորելու համար: Սա շատ կարևոր է ՖԱԽ-երի հետագա գործունեության և իրենց կողմից հռչակված նպատակների ու ծրագրերի համապատասխանության ստուգման տեսանկյունից, քանի որ ՖԱԽ-երին բոլոր երկրներում որոշակի արտոնություններ են տրվում, իսկ ցանկացած արտոնության տրամադրումը, առավել ևս զարգացող երկրներում, չարաշահումների և ստվերային գործունեության հնարավորություններ է ընձեռում:

Պետական գրանցումից հետո ՖԱԽ-երը պետք է ստանան ՀՀ կառավարության կողմից սահմանված նմուշի պետական գրանցման վկայական, որում պարտադիր պետք է նշված լինեն ՖԱԽ-ի անվանումը և «ֆինանսաարդյունաբերական խումբ», «վերագալիս ֆինանսաարդյունաբերական խումբ» կամ «միջպետական ֆինանսաարդյունաբերական խումբ» բառերը: Ընդ որում, այդ բառերը պետք է իրավունք ունենան իրենց ֆիրմային անվանման մեջ օգտագործել միայն ՖԱԽ-ի կենտրոնական ընկերությունները, իսկ գրանցված ՖԱԽ-ի կազմում կամ դրա ստեղծման մասին պայմանագրում փոփոխություններ կատարվելու դեպքում այդ փոփոխությունները ևս նույն կարգով պետք է գրանցվեն լիազորված մարմնի կողմից:

Շատ կարևոր հանգամանք է ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին պայմանագրին ներկայացվող հիմնական պահանջների և պայմանների հստակ սահմանումը, որոնցից պարտադիր պետք է լինեն՝

- ՖԱԽ-ի անվանումը,
- ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության հիմնադրման կարգը և դրա կազմակերպատիրական տեսակը,
- ՖԱԽ-ի կառավարման բարձրագույն և մյուս մարմինների ձևավորման կարգերը, դրանց լիազորությունների և գործունեության հիմնական պայմանների շրջանակը,
- ՖԱԽ-ի մասնակիցների կազմում փոփոխությունների կատարման կարգը,
- ակտիվների միավորման ծավալները, կարգը և պայմանները,
- մասնակիցների միավորման նպատակը և պայմանագրի գործողության ժամկետը,
- ՖԱԽ-ի կողմից ստացված շահույթի բաշխման և վերաներդրման կարգն ու պայմանները,
- մասնակիցների կողմից որոշված և գործող օրենսդրությանը չհակասող մյուս պայմանները:

Կարծում ենք՝ այս օրենքի հատուկ կարգավորման առարկա պետք է հանդիսանա ՖԱԽ-ի կազմակերպական նախագիծը, այսինքն՝ պետք է տրվի ՖԱԽ-ի ստեղծման նպատակների ու խնդիրների, ներդրումային և այլ նախագծերի, ՖԱԽ-ի գործունեության ընթացքում ակնկալվող տնտեսական, սոցիալական և այլ արդյունքների հնարավորինս մանրամասն նկարագրությունը, ինչպես նաև ՖԱԽ-ի կողմից ներկայացվող այլ տեղեկություններ (տվյալներ) ու փաստաթղթեր, որոնք էլ պետք է հանդիսանան այն հիմնական կողմնորոշիչը, ըստ որի պետք է կայացվի դրա պետական գրանցման մասին որոշումը: Տեղեկատվական և փաստաթղթային այս «փաթեթը» կարող է բավականին ծավալուն լինել և որոշակիորեն տարբերվել նաև առանձին ՖԱԽ-երի դեպքում, ուստի նպատակահարմար կլինի ՖԱԽ-ի կազմակերպական նախագծին վերաբերող պահանջների սահմանման լիազորությունը վերապահել ՀՀ կառավարությանը՝ օրենքում սահմանելով միայն բոլոր տեսակի ՖԱԽ-երի կազմակերպական նախագծերին բնորոշ հիմնական պայմանները:

ՖԱԽ-ի, որպես ձեռնարկատիրական գործունեության համալիր միավորի, պետական կարգավորման և վերահսկողության միասնականության ապահովման նպատակով անհրաժեշտ է սահմանել, որ դրա կառավարման բարձրագույն մարմինը ֆինանսաարդյունաբերական խմբի տնօրենների խորհուրդն է, որի կազմում պարտադիր պետք է ընդգրկվեն ՖԱԽ-ի բոլոր մասնակիցների ներկայացուցիչները (բնականաբար, դրանք կընտրվեն այդ ՖԱԽ-ի մասնակիցների կառավարման համապատասխան իրավասու մարմինների կողմից՝ իրենց հիմնադիր փաստաթղթերով սահմանված կարգով): Հաշվի առնելով այս հարցի խիստ կարևորությունը, կարծում ենք, ֆինանսաարդյունաբերական խմբի տնօրենների խորհրդի լիազորությունների և հիմնական գործառույթների շրջանակը, ինչպես նաև որոշումների ընդունման կարգը նույնպես պետք է սահմանվեն ՖԱԽ-ի ստեղծման մասին պայմանագրով և ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության կանոնադրությամբ:

Մյուս էական հարցը, որն օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն է զգում, ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության հետ կապված հարաբերությունների հստակեցումն է: Հասկանալի է, որ այդ ընկերությունը պետք է լինի իրավաբանական անձ, որը կարող է հիմնադրվել ինչպես ՖԱԽ-ի ստեղծման պայմանագիր կնքած բոլոր մասնակիցների կողմից, այնպես էլ ձևավորվել որպես մայր ընկերություն՝ արդեն իսկ գոյություն ունեցող իր դուստր ընկերությունների հետ ՖԱԽ կազմելու դեպքում, քանի որ օրենքով և իր կանոնադրությամբ այդ ընկերությունն արդեն իսկ լիազորված կլինի վարելու իր դուստր ընկերությունների հետ կազմած ՖԱԽ-ի գործերը: ՖԱԽ-ի կենտրոնական ընկերությունը պետք է կառավարի միավորման գործունեությունը և համակարգի դրա մասնակիցների գործողությունները՝ պայմանագրով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով, իսկ ՖԱԽ-ի գործունեությունն ասելով անհրաժեշտ է հասկանալ և օրենքով սահմանել խմբի մասնակիցների այն գործողություններն ու գործունեությունը, որոնք վարվում են ՖԱԽ-ի ստեղծման պայմանագրին և (կամ) կազմակերպական նախագծին համապատասխան՝ համախմբված (միավորված), իսկ առանձին դեպքերում՝ նաև առանձնացված ակտիվների օգտագործման դեպքում (կախված ՖԱԽ-ի կազմակերպատիրավական տեսակից, ՖԱԽ-ի ստեղծման պայմանագրի պայմաններից և այլն): Իսկ ինչ վերաբերում է ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության կազմակերպատիրավական տեսակին, ապա այն կարող է հանդես գալ ինչպես ներդրումային ընկերության, այնպես էլ տնտեսական ընկերության, ասոցիացիայի կամ իրավաբանական անձանց միության ցանկացած տեսակի կարգավիճակով, որոնք արդեն իսկ սահմանված են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով:

ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության կողմից լիարժեք գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ է հստակ սահմանել նաև նրա լիազորությունների և իրավասությունների շրջանակը, որոնք կարող են արտացոլված լինել ինչպես օրենքում, այնպես էլ նրա կանոնադրության մեջ: Այդ լիազորություններից հատկապես կարևոր է շեշտադրել՝

- ՖԱԽ-ի մասնակիցների անունից, դրա ստեղծման և գործունեության հետ կապված հարաբերություններում հանդես գալը և ներկայացուցչական գործառույթների իրականացումը,
- ՖԱԽ-ի հաշվապահական ամփոփ (համախմբված) հաշվեկշռի, հաշվառման և հաշվետվությունների կազմումն ու վարումը,
- ՖԱԽ-ի մասնակիցների անունից որպես անձանց խումբ և համախմբված հարկատու հանդես գալը,
- ՖԱԽ-ի գործունեության մասին տարեկան հաշվետվությունների պատրաստումը, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հրապարակումը և լիազորված մարմիններին ներկայացումը,
- օրենսդրությամբ սահմանված կարգով ՖԱԽ-ի մասնակիցների համար կամ նրանց շահերից ելնելով՝ բանկային առանձին գործառնությունների կատարումը,
- ՖԱԽ-ի ստեղծման պայմանագրով և իր կանոնադրությամբ սահմանված դեպքերում խմբի մասնակիցների անունից որոշակի գործարքների կամ գործողությունների կատարումը, պայմանագրերի կնքումը,
- ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության պարտավորությունների համար, ՖԱԽ-ի ստեղծման պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով, դրա մասնակիցների կողմից համապարտ և (կամ) սուբսիդիար (լրացուցիչ) պատասխանատվության կրումը և այլն:

ՖԱԽ-երի ձևավորման գործընթացի խթանման, ինչպես նաև պետության կողմից տնտեսական, սոցիալական և մի շարք այլ նպատակների իրականացման համար պետությունը ՖԱԽ-երին կարող է տրամադրել որոշակի աջակցություն, որի ձևերից օրենքում անհրաժեշտ է նշել՝

- ՖԱԽ-ի այն մասնակցի պարտքերի հաշվանցումը, որի բաժնետոմսերը վաճառվում են ներդրումային աճուրդներում, և որոնք ձեռք են բերվում նույն ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության կողմից,
- ՖԱԽ-ի մասնակիցներին սարքավորումների ամորտիզացիոն ժամկետների ինքնուրույն որոշման իրավունքի վերապահումը՝ ամորտիզացիոն հատկացումներից ստացված միջոցները ՖԱԽ-ի գործունեությանն ուղղելու պայմանով,
- ՖԱԽ-ի կենտրոնական ընկերությանը որոշակի ժամկետով պետական (համայնքային) ընկերությունների բաժնետոմսերի փոխանցումը՝ տիրապետման և օգտագործման իրավունքով,
- ներդրումների ներգրավման նպատակով ՖԱԽ-ին պետական երաշխիքների տրամադրումը,
- ՖԱԽ-ի ներդրումային նախագծերի իրականացման նպատակով ներդրումային վարկերի, հարկային արտոնությունների և ֆինանսական աջակցության այլ ձևերի տրամադրումը և այլն:

Նմանատիպ արտոնություններ կամ աջակցության ձևեր ՖԱԽ-ի կազմում գործող բանկային և ֆինանսավարկային կազմակերպություններին կարող են տրամադրվել նաև ՀՀ Կենտրոնական բանկի կողմից՝ նրանց ներդրումային ակտիվության մակարդակի բարձրացման

նպատակով, որոնք նույնպես պետք է սահմանվեն օրենքով: Նշենք նաև, որ աջակցության այս ձևերն ու միջոցառումները պետք է տրամադրվեն երկրի տնտեսական զարգացման համապատասխան տարվա գերակայություններից ելնելով, որոնք էլ, իրենց հերթին, հայտարարվում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ներկայացման ժամանակ, իսկ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մեջ էլ պետք է արտացոլվեն տրամադրված պետական աջակցության հետևանքով ձեռք բերված տնտեսական, ֆինանսական և սոցիալական արդյունքները՝ հնարավորության տալով երկրի օրենսդիր մարմնին տեղեկանալու ՖԱԽ-երի գործունեության արդյունավետության ու նպատակայնության մակարդակի մասին և իրականացնելու անհրաժեշտ վերահսկողություն:

ՖԱԽ-երի գործունեության արդյունավետ կազմակերպման, տրամադրված պետական աջակցության նպատակային օգտագործման, ինչպես նաև պետական քաղաքականության հետ դրանց գործունեության ներդաշնակեցման տեսանկյուններից շատ կարևոր նշանակություն ունեն ՖԱԽ-երի գործունեության նկատմամբ պետական վերահսկողության ու հաշվետվության համակարգի ձևավորումն ու կիրառումը: Այս առումով, օրենքի վերահսկողական դրույթները պետք է դիտարկել ոչ թե առանձնացված, այլ որպես ի լրումն տնտեսավարող սուբյեկտների վերահսկողության մասին գործող օրենսդրությամբ սահմանված այն դրույթների, որոնց միջոցով իրականացվում են հարկային, մաքսային, բնապահպանական և վերահսկողության մյուս ձևերը:

Որպես ՖԱԽ-երի գործունեության նկատմամբ վերահսկողության առաջին մակարդակ, առաջարկում ենք օրենքով ներդնել հաշվետվությունների ներկայացման մեխանիզմը, մասնավորապես՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան 60-օրյա ժամկետում ՖԱԽ-ի կենտրոնական ընկերությունը, ինչպես պետական կառավարման լիազորված մարմնին, այնպես էլ ՖԱԽ-ի բոլոր մասնակիցներին պետք է ներկայացնի ՖԱԽ-ի տարեկան գործունեության մասին հաշվետվություն, որի ձևը և դրան ներկայացվող պահանջները կսահմանվեն ՀՀ կառավարության կողմից: Ընդ որում, հաշվետվության հետ միասին պետք է ներկայացվի նաև անկախ աուդիտորի կողմից կազմված եզրակացությունը, որի հետ կապված ծախսերը պետք է կատարվեն կենտրոնական ընկերության միջոցների հաշվին, և որը (հաշվետվության հետ միասին) պետք է հրապարակվի առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում և տեղադրվի կենտրոնական ընկերության ու լիազորված մարմնի ինտերնետային կայքերում: Վերահսկողության խստացման անհրաժեշտության դեպքում, կարծում ենք, կարելի է սահմանել նաև լրացուցիչ (տարեկան ոչ ավելի, քան մեկ անգամ) հաշվետվությունների և աուդիտորական ստուգման պահանջներ՝ պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով, որը կիրականացվի նրա կողմից ընտրված անկախ աուդիտորի միջոցով:

Ինչ վերաբերում է վերահսկողության հիմնական ձևին՝ ստուգումներին և ուսումնասիրություններին, ապա՝

- ստուգումներն ու ուսումնասիրությունները պետք է կատարվեն գործող օրենսդրությամբ համապատասխան,
- բացի նրանից, որ ՖԱԽ-ի մասնակիցներն օրենսդրությամբ սահմանված կարգով առանձին-առանձին կենթարկվեն ստուգումների, ֆինանսարդյունաբերական խումբը՝ որպես մեկ միասնական կազմակերպություն, նույնպես կստուգվի օրենքով նախատեսված կարգով՝ որպես առանձին միավոր: Բացի դրանից, լիազորված մարմինը պետք է իրավունք ունենա նշանակելու լրացուցիչ ստուգումներ (տարեկան ոչ ավելի, քան երկու անգամ), որոնց աշխատանքներին կարող են ներգրավվել նաև ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մասնագետները,

- ՖԱԽ-ի կենտրոնական ընկերությունը և դրա մասնակիցները պետք է պարտավորված լինեն ներկայացնելու անհրաժեշտ (ինչպես նախորդ ժամանակահատվածների, այնպես էլ ընթացիկ գործունեության վերաբերյալ) բոլոր տվյալներն ու փաստաթղթերը, որոնք կպահանջվեն ստուգող մարմինների կողմից, ընդ որում՝ ինչպես ստուգման ընթացքում, այնպես էլ դրանից հետո՝ լիազորված մարմնի պաշտոնական գրության հիման վրա,
- ստուգումների արդյունքում հայտնաբերված տվյալների անհամապատասխանության, անհրաժեշտ փաստաթղթերն ու տվյալները չներկայացնելու, ՖԱԽ-ի ստեղծման պայմանագրի դրույթներից և կազմակերպական նախագծից շեղվելու փաստերի բացահայտման, պետական աջակցության ձևերի և միջոցների չարաշահման, օրենսդրության պահանջների և մյուս խախտումների հայտնաբերման դեպքում լիազորված մարմինը պետք է պարտավորված լինի ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ դրանց վերացման և ՖԱԽ-ի ստեղծման պայմանագրով, կանոնադրությամբ ու կազմակերպական նախագծով սահմանված խնդիրներին խմբի գործունեության համապատասխանեցման ուղղությամբ: Խախտումների բնույթից և ծավալներից կախված, լիազորված մարմինը կարող է ընդունել համապատասխան որոշումներ, մասնավորապես ՖԱԽ-ի մասնակիցներին առաջարկել որոշակի ժամկետներում վերացնելու հայտնաբերված խախտումները, առաջարկել ՀՀ կառավարությանը ՖԱԽ-ին տրամադրված արտոնությունները և պետական աջակցության ծավալներն ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնելու նպատակով, խախտումների կատարման մեջ մեղավորներին ենթարկելու օրենքով սահմանված պատասխանատվության կամ դիմել ՀՀ կառավարությանը՝ ՖԱԽ-ի լուծարման և դրա պետական գրանցումը չեղյալ համարելու նպատակով: Նշված բոլոր միջոցառումների մասին լիազորված մարմնի կողմից պետք է տեղեկատվություն հրապարակվի՝ ՖԱԽ-երի հետ կապված պետական քաղաքականության թափանցիկության և հրապարակայնության ապահովման նկատառումներից ելնելով:

Օրենքով պետք է հստակ կանոնակարգվեն նաև ՖԱԽ-ի լուծարման և գործունեության դադարեցման հետ կապված հարաբերությունները, ըստ որի՝ ՖԱԽ-ը լուծարված կհամարվի դրա պետական գրանցման վկայականի գործողությունը դադարեցնելու և ՖԱԽ-երի պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից: Ընդ որում, անհրաժեշտ է հստակ սահմանել, որ ՖԱԽ-ը կարող է լուծարվել միայն որոշակի հիմքերի առկայության դեպքում: Որպես նման հիմքեր, կարծում ենք, անհրաժեշտ է ամրագրել՝

- ՖԱԽ-ի գործունեության դադարեցման մասին դրա բոլոր մասնակիցների կողմից ընդունված որոշումը,
- դատարանի կողմից ընդունված և ուժի մեջ մտած որոշումը՝ ՖԱԽ-ի ստեղծման պայմանագիրն անվավեր ճանաչելու կամ ՖԱԽ-ի ստեղծման պայմանագիրը և հիմնադիր մյուս փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու մասին,
- ՖԱԽ-ի ստեղծման մասին պայմանագրի ժամկետը լրանալը (եթե այն ստեղծվել է որոշակի ժամկետով, և սահմանված կարգով այդ ժամկետը չի երկարաձգվել),
- ՀՀ կառավարության կողմից ՖԱԽ-ի գործունեության դադարեցման մասին որոշման ընդունումը՝ կապված դրա գործունեությունը պայմանագրին և (կամ) կազմակերպական նախագծին չհամապատասխանելու հետ (բնականաբար, սրան պետք է նախորդեն համապատասխան հանձնարարականները, որոնք չկատարելու դեպքում էլ կարող է ընդունվել տվյալ որոշումը):

Ինչ վերաբերում է ՖԱԽ-ի գործունեության դադարեցման իրավական և տնտեսական հետևանքներին, ապա դրանք արդեն իսկ կարգավորված են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով և կկիրառվեն նաև ՖԱԽ-երի լուծարման պարագայում, և այս առումով օրենսդրական նոր դրույթների ներմուծման անհրաժեշտություն, կարծում ենք, չի առաջանա:

Առաջարկվող մոտեցումներն, իհարկե, սպառնիչ չեն կարող լինել և նպատակ ունեն ընդամենն ուրվագծել օրենսդրական կարգավորման այն հիմնական շրջանակը, որն անհրաժեշտ է ամրագրել ՖԱԽ-երի ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները քաղաքակիրթ և նպատակային կարգավորելու տեսանկյունից:

ԻՐԻՆԱ ՏԱՐԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

ԴԱՎԻԹ ՇԱՄՇՅԱՆ

ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

«Երևան ջուր» ՓԲԸ երկարաժամկետ վարձակալության պայմանագիրը մասնակի ներդրումային պարտավորություններով կարելի է դասել մասնավոր ընկերության մասնակցության խառը մոդելին: Պայմանագրի կառուցվածքն այնպիսին է, որ թույլ է տալիս հաշվի առնել այն առավելությունները, որոնք կարող էր տալ օրենսդրորեն ձևակերպված պետության և մասնավոր հատվածի միջև կոնցեսիոն հարաբերությունների համակարգը: Ի տարբերություն վարձակալության ստանդարտ մոդելի, երբ վարձատուն (պետությունը կամ քաղաքային ինքնավարության մարմինը) իր վրա է վերցնում ամբողջությամբ նոր ներդրումներ իրականացնելու և ֆինանսավորելու պատասխանատվությունը՝ տվյալ մոդելում մասնավոր ընկերությանը փոխանցված է սահմանափակ ներդրումներ կատարելու պատասխանատվություն: Ընկերության հիմնական պարտավորություններն են՝

- տեխնիկական կառավարումը, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման (ՋնՋ) կառույցների շահագործումը, սարքավորումների՝ տրանսպորտային միջոցների, շինարարական մեքենաների, տեղեկատվական մեքենաների, տեղեկատվա-գրաֆիկական համակարգերի, հոսակորուստների հայտնաբերման նյութերի ձեռքբերումը 6.4 մլն եվրոյի չափով,
- առևտրային հարցերի կառավարումը,
- պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքային ծրագրի (ՊՎԸԱԾ) իրականացումը 8.87 մլրդ դրամի չափով պայմանագրի գործողության ամբողջ ժամանակաընթացքում,
- վարձակալության վճարի վճարումը,
- հաշվետվության ներկայացումը պայմանագրի պահանջների համաձայն:

Ինչպես տեսնում ենք, ընկերության առջև դրված են համակարգի հիմնական ֆոնդերի պահպանման, տեխնիկական սպասարկման և վերանորոգման, այլ ոչ թե ենթակառուցվածքի